

ձշգրելու համար հոս րսեմ, որ Սաֆար Սպահանի հայոց քաղաքարն էր, մինչ նա-
զար բոլոր Պարսկահայոց մեծն ու իշխանը:

1610-ին Պոջայ Նազար Դաւրէժ կը գտնու-
ւէր: Առաքել Դաւրիժեցի կը վկայէ, որ երբ
Պոջայ Սաֆար Հոփսիմեան նշխարները կը
գրաւէ Սպահանի մէջ, Շահ Ապպաս Մեծ
«Թարվէզ էր, նաեւ Պոջայ Նազարն եւս անդ էր
առաջի շահին»: 16) Պոջայ Սաֆար եւ Դաւրիթ
կաթուղիկոս Սպահանէն «գրով ծանուցեալ են
Պոջայ Նազարին՝ որ էր ի Թարվէզ: Եւ Պոջայ
Նազարն, քանզի համարձակ էր առաջի շահին,
ծանոյց նմա, եւ խնդրեաց ի շահէն զթուղթ
հրամանաց եւ ծառայ թագաւորական առաքել
զինի պատրեացն»*) որք զնշխարսն հանին, զի
կարեալ զնոսա ածցէ առաջի թագաւորին, եւ
շահն արար զամենայն կամս Պոջայ Նազար-
րին:»17)

Պոջայ Նազար Աւետիք Ալթուն անուն մէ-
կը զրկեց նշխարներուն մնացեալ մասը ձեռք
բերելու համար: Աւետիք կը սեպեմ այս շատ
ծանօթ նիւթը երկար բարակ հոս մէջբերել:
Ալթուն ձեռք կը բերէ նշխարները: «Իսկ Ալ-
թունն ելեալ յԱստապատու՝ առեալ ընդ իւր
զպատրիկսն եւ զնշխարն եւ զնացեալ եհաս ի
Թարվէզ՝ եւ մատոյց առաջի Պոջայ Նազարին
զնշխարսն եւ զպատրիկսն. եւ Պոջայ Նազարն
ծանոյց շահին, եւ խնդրեաց ի շահէն, եւ ա-
սաց. յաջողումն բախտի թագաւորիդ մերոյ
ո՛չ եթող զնալ նշխարացն այնոցիկ ի Ֆրան-
կրստան: Ձի թէ զնացեալ էր, ամենայն ազգն
Հայոց զինի նորա զնային, քանզի ազգն Հայոց
ամենեքեան կախեալ կան զմանէ, եւ մանա-
ւանդ ժողովուրդքն Ջուզայեցոց եւ Գողթան
գաւառին, յորոց բազումք են վաճառականու-
թեամբ այժմ ի Ֆրանկստան, եւ հազիւ թէ
գառնային նոքա յայս աշխարհ: Եւ խնդիր մեք
այս է յարքայէ, մի գուցէ բաժանեացի մասն
ինչ ի նշխարացս յայսցանէ, եւ թէ իցեն Ֆը-
ռանկունքն առեալ ի սմանէ, զայն եւս առեալ ի
նոցանէ մեզ տացէ, զայս բան նախ քան զոր

քննութեան դատաստանին ասաց Պոջայ Նա-
զարն ընդ շահին: Իսկ շահն արար պատասխա-
նի, թէ որովհետեւ յօժարութիւն կամաց Ջու-
զայեցոց այդպէս է. յազազս յօժարութեան
նոցա, եւ ի շնորհ երեսաց քոց արարից որպէս
ասացերդ»:

«Եւ յաւուր յորում նստաւ շահն ի դա-
տաստան, երբ Ալթունն զնշխարն եւ զպատ-
րիկսն առաջի շահին, եւ շահին հարցեալ տե-
ղեկացաւ ամենայնի. եւ զպատրիկսն եթող ա-
ռանց պատուհասի, քանզի ի ժամանակին
յայնմիկ զաչն խաղաղութեան ուխտեալ եւ
հաստատեալ էին շահն եւ թագաւորն Ֆրան-
կաց**): ընդ միմեանս, եւ ի շնորհուկս առնե-
լով նոցա ոչ պատժեաց ըզպատրիկսն, այլ ի
բաց արձակեաց առանց պատժոց: Իսկ պատըր-
եաց զհամարձակութիւն առեալ ի ներողութենէ
շահին, ասացին առ շահն. զայսքան աշխատու-
թիւն եւ զնեղութիւն՝ զոր կրեցաք մեք յա-
զազս նշխարացդ, խնդրեմք զի զմասն ինչ ի
նշխարացդ պարգեւեացէ մեզ արքայ, պատաս-
խանի արար նոցա շահն հիացական մեղադրու-
թեամբ ասելով. զորո՞ց զինչսն առեալ տաց
ձեզ, զի զայս նշխար՝ զոր խնդրէք, Հայոց է,
եւ որ իրաւունք վկայեն թէ զինչս նոցա առեալ
ձեզ տաց, եւ ապա շահն արար զհրաման տալ
զնշխարսն զամենայն ցՊոջայ Նազարն, որ ե-
ղեւ այնպէս»:

«Յետ այսօրիկ կամեցեալ է շահն առաքել
զնշխարն ի քաղաքն Ասպահան՝ եւ Պոջայ Նա-
զարին եւս ասացեալ է թէ՛՝ այսպէս կամիմ առ-
նել, եւ նա եւս հաւանութիւն տուեալ է
այսմ»:18)

Եւ այսպէս նշխարները Դաւրէժէն կը
ղրկուին Սպահան առ Պոջայ Սաֆար, որուն
տունը մասնաւոր տեղ մը կը պահուին:

Կարճ ժամանակ վերջ, Շահ Ապպաս աղէ-
տալի դադարաբար ունեցաւ Էջմիածինը հիմ-

*) Պատրէ, բատրէ — հայր լատին բառին
աղաւաղումը:

16) Պատ. Դաւրիժեցոյ, էջ 186:

17) Անդ՝ էջ 187:

**) Արդարեւ, 1611-ին Շահ Ապպաս Մեծ
մտադիր էր Կարմեղեան Ֆրա Յովաննէս Դատ-
տէսը իրր Պարսից դեսպան ուղարկել Մոս-
կովաց դուքսին, Լեհաստանի թագաւորին եւ
Հոլովմայ Պապին մօտ՝ Թրքաց դէմ զինակ-
ցութեան մը ծրագրով:

18) Անդ՝ էջ 190-192: